

տու՛մ ցոյց տալ բոլոր պարսկահայաստանի քրիստոնեաներին իրենց դատնութեան ընդհանուր աջ տո՛թիւ մի մեծ ժողով է գումարուել Դուինում 506 խմբին Բարդէն կաթուղիկոսի նախագահութեամբ և վրաց ազատներից ուղղափառ պորսիկների մասնակցութեամբ որտեղ բանադրուել է Պարսից ընդունած նկատարականութիւնը իւր զլխաւոր ներկայացուցիչներով՝ Ակակիոս Բարձումա Բարեոս և յիւ Զենոն կայսեր հնկտոխիլոնն իրեն ուղղափառ դատնութիւն է ծանաչուել և ըստ այսմ Բարդէոսի ժողովը պաշտօնադրուել է ընդհանուր աջ տո՛թիւ ընկերային համարուել է քողարկեալ նկատարականութեան ծնունդ աբեմն խոսակի ուղղափառ քրիստոնեաների համար թէ երբ է տեղի ունեցել պաշտօնական բանադրանքը՝ այդ մասին յետոյ:

Կ. Վ.

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ.

ՕՐԹՈՂՈՔՍ ԵԿԵՂԵՑԻ.

С. Петербургскія Вѣдомости թերթի 271 հում մի գաւառական թղթակից առանձին ուշադրութեան արժանի մի ընդարձակ յօդուած է նուիրել այն հարցին, թէ ինչ միջոցներով են մաքառում այժմ Ռուսաստանում աղանդների դէմ և թէ որն է տեղի կողմն այդ մաքառման, «Ռուսաստանը միշտ հպարտացել է հաւատոյ խնդիրներում ցոյց տուած ներդաճութեամբ ուղղափառութիւնը հեռու է եղել միշտ մոլեռանդութիւնից և բռնութիւնից, այսպէս է սկսում նա իւր յօդուածը— և սկզբունք գնելով որ չգաղափարների զգացմունքների հաւատալիքների դէմ կռիւր կարող է և պէտք է լինի միայն կախ հոգւոյ աշխարհի և ոչ երբեք նիւթական այժի սահմաններում, քրեական պատիժների և օստիկանական ձեռնարկութեանց միջոցաւ, ցոյց է տալիս փաստերով, որ աղանդները և հերձուածները զարգացել և զօրացել են աւելի այն ժամանակները, երբ ամենախիստ միջոցներ են ձեռք առած եղել նոցա դէմ և ամենասոսկալի տանջանքներով նեղել աղանդաւորներին մինչ ընդհակառակն մեր դարում, երբ կառավարութիւնը թէ եկեղեցին սկսել են մեղմութեամբ վերաբերուել, քարոզներով հրապարակական վիճարանութիւններով նոցա հա-

մոզմունքի վերայ ազդել և ամեն մի փոքրիկ շեղում ձիւսկառարութեանց մէջ իրեն մեծ յանցանք և եկեղեցւոյ բաժանում չնկատել՝ նոցա եռանդն ու գործունէութիւնը ամեն կերպ պակասել է, «նիւթական բռնութիւնը սխալ մտքերով կուրացած մարդուն աւելի է համոզում թէ այդ մտքերի մէջ անպարտելի ճշմարտութիւն կայ, թէ նորա համար միայն հալածում են նոցա քաղաքական և գաղափարական խիստ միջոցներով, որ խոհականութեան փաստերով հերքել չեն կարող, Էստ աղանդներ յառաջ են գալիս բարոյական պահանջների, հոգեւոր անունդի կարիքից, երբ այդ պահանջներին ուղիղ ծանապարհով բաւականութիւն չի տրուում՝ մարդիկ կամայ ակամայ կողմնակի ծանապարհներ են ընտրում: «Զուր տեղը չէ որ ժողովարանութիւն արեցութիւնից, համեստ կեանք, խօսքի զգաստութիւն, ընկերական օգնութիւն— առաւելագուրների սովորական յատկանիշներն են, որոնք և ամենից աւելի են նպաստում նոցա տարածուելուն: Իսկ այս բոլոր բարոյական սովորութիւնները իրեն քրիստոնեական կեանքի պարտաւորեցուցիչ կանոն պահանջուում են նաև ուղղափառ եկեղեցւոյ կողմից: Ինչո՞ւ արդեօք նորա արմատ չեն բռնում մինչև այժմ ժողովրդի մէջ, որ սրբութեամբ պահում է ուղղափառութիւնը, Պէտք է ուրեմն ամեն ջանք գործ դնել հոգեւորականութեան մէջ կրօնական եռանդ և բարոյական ոգի զարգացնելու, որ խօսքով և օրինակով ճշմարտութեան բարութեան, առաքինութեան ուղեցոյց լինի նա՛յն ժամանակ աղանդներն իրենք իրենց կանխեալանք ապա թէ ոչ, իրականութեան առաջ աչք փակելով և թող տալով, որ ժողովուրդի մի ահագին գուցէ բարոյապէս աւելի զօրեղ մաս իրեն վարակուած բանակ նկատուի՝ կնշանակէ այն տեղը հասցնել, որ համազգային ժայռից մի խոշոր հատուած կտրուի ընկնի, իսկ այդ առանց ուժգին ցնցման չի լինի: «Այն մարդիկ, որոնք բռնութեան երկրորդից կամ նիւթական շահերի ցանկութեամբ իրենց հաւատքը փոխում են՝ ամենաթոյլ և բարոյապէս անակ մարդիկ են, այդպիսի մարդկանցով կարծեցեալ կողմնակիցների թիւը բազմացնելն ոչ մի կրօնի ներքին ոյժը չի աւելացնում, այլ թուլացնում է: «Եւ սակայն, հակառակ մեր կողմնադրութեան մարգարեական հայեացքներին, շատերը շարունակում են դեռ հաւատալ անմտաբար ստիպումների, ահարկութեան և պատիժների փրկարար զօրութեանը հաւատոյ խնդրում:»

Ապա Արդոյ յօդուածագիրը իւր սեփական փորձառութիւնից օրինակ է բերում մի աղանդաւորի հայեացքն այս խնդրի վերայ, նորա բառացի խօսքերով, «Մենք եկեղեցու դէմ չենք ելնում, մենք օղիտան դէմ ենք ելնում: Մեր բոլոր մեղքը նորանում է, որ օղի չենք խմում, հարսանիքներին

և հացկերպութիւնն անկարգութիւններ չենք անում: այլ աղէի կերպով ինքնաեւ շուրջ նստած՝ մեր թէյն ենք խմում... Դորա փոխաբէն մենք թող չենք տայ, որ ընկերը կորչի... այլ եթէ հիւանդացել կամ ուժից ընկել է մէկը՝ մենք բոլոր հասարակութեամբ օգնում ենք: Աստուծոյ ճանապարհով ինչպէս Քրիստոս պատուիրել է: Արդհետեւ այսօր նա է՝ վաղը ես...» Յետոյ այդ մարդը մի քանի օրինակներ է բերում իւր և իւր գաղափարակցների կեանքից, թէ ինչպիսի անտեղի հաշտանքների են նմարկուում իրենք, և աւելացնում է: «Պալը (ոսւս քահանայ) իւր հօտ և խնայեալ քրիստոնեաներ համարում է նոցա միայն որոնք տներին անասունների պէս քաշ են դալիս կրուում են: Ընդ հայհոյում: անկարգութիւն, սրկկայութիւն անում: Եկեղեցում՝ կոճղի պէս կանդնում՝ առանց պատարագի և ժամերգութեան միտքը հասկանալու: Գօտ օրերս հարսանիք էր անցնում և շուրջը բոլորեքան պարում էին: սրոց պատկերներ ունէին ձեռներին՝ պատկերը ձեռին պարում էին: Գի ուրիշ հարսանիքում խաղեր էին սարքել՝ մինչև այնտեղ հասցրին: որ մէկը իրեն սատանայ հագնուեցաւ կրկին մօր քսեց: մօրութից վաշ կակնից՝ գլխին կզիւրներ: մի ուրիշը պոպ դարձաւ շուրջաւի տեղ փետած ձգեց վերան—կոնքի մէջ մի կատուի մկրտել սկսան և այնպիսի անփայել խօսքեր ասել: որ կրկնելը մեղք է: Եւ այս բոլորը ոչինչ է: պոպի համար այս բոլորը քրիստոնեական է:—Հարսանիքում: ասում է: արածներն ի՞նչ չեն անում:—Իսկ երբ մենք հարսանիքին չենք խմում՝ կամ մի երկու փոքրիկ բաժակ միայն ցանկացողների համար դնում ենք: կրկին և ընտանիքի տուներ չենք քանդում: հարսանիքի համար: աղէի և համեստ կերպով ժամանակ ենք անցնում՝ այդ արդէն քրիստոնեարար չէ: խլիսուութիւն է (աղանգի անուն): սատանայի ծառայութիւն:»

Այնուհետեւ Արքայ Թղթակիցը պատմում է իւր աշքով տեսածն այս աղանդաւորների կրօնական կեանքի և սփորութիւնների մասին և ապիւս է երկու փոքրիկ նմուշներ նոցա կրօնական երգերից: որոնց մէջ փայլում են և՛ վառ անկեղծ սիրոյ ու հաւատարմութեան զգացումներ գէպի Առաքից Ինքնակա Սպիտակ մարդ և՛ մարդու հաւատ ու ջերմեանդութիւն: ապա յարում է: «Ահա այսպիսի խոր բարոյական նրբազգացութեամբ լի պարզսիրտ կրօնական բանաստեղծութեամբ ամբողջովին համակուած: ամէն բանի մէջ խոհանարութիւն և ճշմարտութիւն որոնող մարդոց հետ վարուում են ինչպէս բիրտ անասունների հետ՝ նոցա թէպէտե սխալ ուղղութիւն ստացած: հոգեւոր ձգտումներին փայտով, բուռնցքով, հարկադրութեամբ և պատիժներով պատասխան տալիս: նա մէջ է բն-

րում իւր խօսակցութիւնը մի յայտնի միտիւնարի հետ: որ ուղարկուած էր աղանդաւորներին դարձի բերելու և այն կարծիքն ունէր: թէ ոստիկանութեան ազգու գործակցութեամբ միայն նոցա վերայ ազդել կարելի է: թէ զանազան աղանդաւորների տարբերութիւնն իրարից այնպէս է: ինչպէս զանազան տեսակ շներին—և վերջացնում է իւր տխուր խորհրդածութիւնները՝ համեմատելով հասկացողութեան և գործունէութեան այս եղանակը աւետարանական սկզբունքների և այն Առաքեալի քարոզութեան հետ: որ ասում էր: «Ընդ ամենայնի ամենայն եղէ: զի թիրեա ապրեցուցից զամենայն:»

Перк. Вѣстникъ թերթի թղթակիցը լիւնցնելով թէ ինչպէս մինչև այժմ ապարդիւն են անցել ըստ մեծ մասին եկեղեցւոյ և կառավարութեան գործ դրած ջանքերն հերձուածողներին ի դարձ բերելու նկատմամբ: մինչ ընդհակառակն նոցա իրենք աւելի և աւելի ազգեցութիւն են ձեռք բերում և օրթոդոքսներին մոգորեցնում: կանգ է առնում յատկապէս այն կէտի վերայ թէ ինչ վնասակար հետեանքներ են յառաջ գալիս հերձուածողների հետ կնքած ամասնութիւնից: Աւշադրութեան արժանի հանգամանքն այստեղ այն է նորա ասելով: որ մինչ Օրթոդոքս եկեղեցւոյ մէջ ձեռնների համաձայնութիւնն անհրաժեշտ է համարուում պատկազրութեան համար՝ այդպիսի պահանջ չի դրացուում այն դէպքում: երբ մի երիտասարդ կամ ազդիկ հերձուածողի հետ է ամուսնանում: ուստի այս և նման արգելքներից խոյս տալով՝ երիտասարդ զոյգերն որևէ հերձուածի գիրկն են սպալնում և անկանոն ընտանիքներ կազմում:

—Գի քանի եկեղեցական թերթեր աշխատում են միտիւնարական և եկ. զպրոցական գործի համար ուղիղ հասկացողութիւն արձարնել այն ուղղութեամբ: որ գծել է Ս. Սինդի սրբեր-պրոփաւոր Պորեգոնոսցէվ նորերս հանգիստապէս արտասանած հետեւեալ խօսքերով: «Արտաքին թշնամիները չեն երկիւղալի եկեղեցական զպրոցի համար: երկիւղալի են ներքին թշնամիները՝ անտարբերութիւն: ձեականութիւն և ստութիւն: ստութիւն: որ արտայայտուում է ճշմարտութիւնը՝ լինի այդ դատն ճշմարտութիւն՝ ծածկելու և գործը գեղեցկացրած կերպով ներկայացնելու ձգտմամբ: իբր թէ ամէն և ինչ և ամէն ժամանակ յաջող է գնացել:»

—Ուստաց եկեղեցին ինչպէս յայտնի է վերջին ժամանակ առանձին ուշադրութիւն է դարձնում իւր ազգեցութիւնը զօրացնելու սահմանների մօտ գրտնուած երկրներում: Այսպէս՝ Ս. Սինդը որոշել է 30,000 ֆին. մարկ յանձնել Ֆինլանդիայի արքեպիսկոպոս Անտոնիոսին: այդ երկրի օրթոդոքս ազգաբնակութեան կրթական և բարեգործական հաստատութիւնների պէտքերը լցուցանելու համար: նոյն

երկրում թող է տրուել մի քանի անգամ հանդիսաւոր տօներին ժամերգութիւնը ֆիներէն լեզուով կատարել, որ նպատակ է մանաւանդ եկեղեցական երգեցողութիւնը մատչելի և սիրելի դարձնելու տեղացիներին:

Նման հոգացողութիւն նկատելի է Կարսի վիճակի օրթոդոքսների համար, որտեղ նոքա աչքի ընկնող փոքրամասնութիւն են կազմում՝ մոլոկանների և այլ աղանդաւորների նկատմամբ: Օրթոդոքսների բնական չորս գիւղերից մէկում նոր եկեղեցի և դպրոց է կառուցուել, որ տեղական եկեղեցական վարչութիւնը շատ կարեւոր միջոց է համարում՝ բազմաթիւ աղանդաւորների ճշնող աղդեցութիւնը չեղոքացնելու համար, և՛ հրաւեր է կարգում ամէն կերպ նպաստել օրթոդոքսների թիւն աւելացնելու այս վիճակում:

4. Պոլսում սեպտ. 8-ին մեծ հանդիսով օծուեցաւ Բոլղարացոց նոր եկեղեցին՝ յանուն ս. Ստեփաննոսի: Այդ եկեղեցին, որ այժմ ամբողջ Բալկանեան թերակղզում օրթոդոքսների ամենափառաւոր տաճարն է համարուում, մեծ ծախք է նստել և ամենայն շքեղութեամբ կառուցուել՝ մի տեսակ յաղթութեան կոթող պէտք է լինի այն դատի համար, որ Բոլղարները 50 տարուց ի վեր վարում են տիեզերական պատրիարքութեան դէմ՝ ի պաշտպանութիւն իւրեանց անկախութեան, և որի արդիւնքը եղաւ 1871 թ.-ին 4 Պոլսում առանձին Եկեղարքութիւն հիմնելը, Բնականաբար պատրիարքարանը հաշտ աչքով չէր նայում Բոլղարների ցոյցի վերայ և ամէն կերպ աշխատեց արգելք լինել, որ համադգային բնաւորութիւն չըստանայ: Սորա գաղտնի քանքերի շնորհիւ տաճիկ կառավարութիւնը յիրաւի կանգնեցրեց՝ սահմանադրւի վերայ յայն գնացքը, որով բոլոր բարձր դատակարգի ներկայացուցիչները գալիս էին եկեղեցւոյ օծման հանդիսին ներկայ լինելու. և թէպէտ բոլղարական վարչութեան ազգու միջամտութեամբ արգելքը վերացուեցաւ, բայց հիւրերը չկարողացան բուն հանդիսին հասնել: Այնուամենայնիւ բոլղար ազգութեան բազմաթիւ պատգամաւորներ՝ զանազան երկրներից եկած, ներկայ էին հանդիսին, որ և անցաւ փայլուն շուքով: Երկու դասականից քօր լեկեղեցիների թշնամական յարաբերութիւններն աւելի ևս լարելու համար նոր առիթ էր հարկաւ այս հանգեալ:

— Նորերս 4. Պոլիս եկաւ և սիրալիր ընդունելութիւն գտաւ Սուլթանի կողմից Բոսնիոյ և Հերցեգովինոյ օրթոդոքս համայնքների ուղարկած պատգամաւորութիւնը, որի նպատակն է աշխատել առանձին սերբական եկեղեցի հաստատելու համար: Աւստրիացոց զբաւած այդ նահանգներում և որի նոյն նպատակաւ եղած գի-

մումները Վիեննայում անուշադիր մնացին: Նոցա պահանջած կազմակերպութեան հիմնական կետերը, որ նոքա առաջարկել են ի բարեհայեցողութիւն Տիեզ. Պատրիարքի սպա են. 1) Եպիսկոպոսներ պէտք է ընտրուին հոգեւորականութեան և եկեղեցական համայնքների ներկայացուցիչների կազմած ժողովով, և հաստատուին պաշտօնի մէջ 4. Պոլսոյ պատրիարքի վճռով. Բ) Եպիսկոպոսները պէտք է ուժիկ ստանան Սերբ. օրթոդոքս համայնքներից և ոչ տիրապետող կառավարութիւնից, ինչպէս մինչև այժմ լինում էր. Գ) Կարեւորագոյն եկեղեցական դործերը կարգադրելու համար Սերբ. օրթոդոքս հոգեւորականութեան պէտք է իրաւունք տրուի ժողովական որոշումներ անելու. Դ) Հոգեւորականութեան պէտք է իրաւունք տրուի եկեղ. ժողովներ դումարելու, որովք կախումն պէտք է ունենան 4. Պոլսոյ պատրիարքից, բայց ոչ տիրապետող կառավարութիւնից. Ե) Բոսնիոյ և Հերցեգովինոյ Սերբ. օրթոդոքս եկեղեցին չի բաժանուի Տիեզ. պատրիարքից, այլ աւելի սերտ կերպով կկապուի նորա հետ:— Պատրիարքարանում առանձին յանձնաժողով է կազմած այս կէտերը քննելու համար, ևն թաղրում են, որ՝ արդէն ղէպի Բէլգրադ ուղևորուած, պատգամաւորութիւնը Պետերբուրգ կգայ, նոյն առաջարկները Ս. Սինդիկ ներկայացնելու: Առանձին ուշադրութեամբ հետևում է այս խնդրի ընթացքին Չերնոգորիան, որ ամէնից աւելի պատճառ ունի հետաքրքրուելու իւր ցեղակից և դասանակից ժողովրդի վիճակով:

ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ.

Պերմանիա:

Ամիսներէ ի վեր Ներսիսի թէ քաղաքական և թէ եկեղեցական մամուլը զբաղուած է Գերմ. կայսեր ճանապարհորդութեամբ ղէպի Պաղեստինա, որ արդէն սկսուել է, և ամէնքը լարուած ուշադրութեամբ հետևում են նորա ընթացքին և բնապատում ելքին. Վիլհէլմ Բ. կայսրուհու հետ ելեր է արդէն ինչպէս հետադիւրները հաղորդում են 4. Պոլսից և պէտք է հոկտ. 3-ին Պաղեստինի Հայիֆա նաւահանգիստը հասած լինի: Վենետիկում նա տեսակցեցաւ Իտալիոյ Հումբերտ թագաւորի հետ և խիստ փառաւոր ընդունելութիւն գրտաւ 4. Պոլսում սուլթանի կողմից: Օգոստոսի առ հիւրին ընդունելու համար վաղուց մեծ պատրաստութիւն էր տեսնուում այստեղ, մինչև իսկ մի նոր շքեղ պալատ շինուեցաւ և արևելեան բոլոր պերճութեամբ դարբարուեցաւ. ոչինչ չէր խնայած ապացուցանելու համար, որ ճաճկաստանը գնահատում է հզօր կայսեր այցելութեան մեծ արժէքը իւր համար, իրեւ երախտիւր նորա բարեկամութեան: Նախապէս որոշուած ծրագրի համաձայն Վիլհէլմ

Բ. պէտք է սկսե իւր ուխտագնացութիւնը հոկտեմբերի 14-ին Հայիֆայից դէպի Բաֆֆա, ցամաքի ծանապարհով, գիշերը հանգստանալով հին Կեսարիոյ ասերակների մօտ՝ ծովի ափին գրած վրաններում 16-ին պէտք է ելնէ Բաֆֆայից, ուր նորան զիմաւորելու կգան նահանգապետն ու լատինաց պատրիարքը։ 17-ին կմտնէ Երուսաղէմ և կայցելէ Ս. Գերեզմանն ու ս. տեղերը։ 18-ին Բեթղեհէմ կերթայ, ուր կգանուի առաւօտեան ժամացուցութեան միջոցին բողոքականաց եկեղեցում և նորա ներկայութեամբ կորհնուի Բերքլինի երուսաղիմեան ընկերութեան կառուցած նոր որբանոցը հայ որբերի համար։ 19-ին նա ներկայ կլինի բողոքական գերմանացիներին նորաշէն ս. Փրկիչ եկեղեցւոյ օրհնութեան, որ նորա ուխտագնացութեան զխաւոր կէտն է և նոյն օրը Յորդանանի ափը կերթայ։ Այստեղ Երեքօրի պարիսպների մօտ վրաններ պէտք է ձգուած լինին և այստեղից 20-ին պէտք է Մեռեալ ծովը և Կիրտութեան տեղը և այլ սրբափայտեր անանելու ելնէ։ 21-ին Երուսաղէմ վերադառնալով 3 օր կնուիրէ ս. քաղաքի բազմաթիւ յիշատակարանները զիտելու և 24-ին կվերադառնայ Բաֆֆա, իսկ այնտեղից, եղանակին նայած, ծովով կամ ցամաքով դէպի Հայիֆա։ Մինչև 29-ը կայսրը կձանապարհորդէ շրջակայքում և կայցելէ Նաղարէթ, Թափոր և շ. ապա ծովով Բէյրութ կերթայ, կլինի Գամափոսում և Բալարէհում (շինհեղիսպոլիսը որտեղ գտնուում են Բահայի մեհեարանի ասերակներ) և 3-ին կրկին Բէյրութից նաւ կնստէ վերադառնալու համար։

Ախլէհէմ Բ-ի ծանապարհորդութեան մեծ նշանակութիւն են տալիս նաև քաղաքական տեսակետից՝ նշմարում են, որ բացի գերմանական դադմականութիւնների և առեւտրական ձեռնարկութիւնների համար գանազան արտոնութիւններ ձեռք բերելը, նա պարզե կստանայ սուլթանից Հայիֆա նաւահանգիստը, որ թէպէտ այժմ մի աննշան տեղ է միայն, բայց թէ ծովի և թէ ցամաքի կողմից ամենաբարեկալից պայմանների մէջ գտնուելով կարող է Միջերկրականի ամեկարեւոր նաւահանգիստներից մէկը դառնալ և Գերմանիոյ արտաքին քաղաքականութեան և վաճառականութեան համար առանձին զեր խաղալ, սակայն աւելի ուշադրութեան արժանի է եկեղեցական տեսակէտը, Բնդիրն այն է, որ մինչև այժմ արեւելքի բրիտանականների հովանաւորողը համարուում էր Ֆրանսիան, երբ Ախլէհէմ կայսեր ծանապարհորդութեան լուրը տարածուեցաւ, Ֆրանսիայի բարեկամներն սկսեցին երկիւղ կրել, մի գուցէ զորա հետևանքը կլինի Գերմանիայի ազդեցութեան զօրանալն արեւելքում և գերմ. կաթոլիկներին իւր հովանու ներքոյ առնելը։ Աստիկանում այս խնդիրը մեծ յուզում պատճառեց, պապը Լանտէնիէ կարգիւնային ուղղած մի գրութեամբ

որոշ կերպով յայտնեց, որ ծանաչում է Ֆրանսիայի դարերէ ի վեր նուիրագործուած իրաւունքը՝ հովանաւորելու արեւելքում բոլոր կաթոլիկներին, մերժեց՝ ի պատիւ Ֆրանսիայի, իւր մօտ առձեական առանձին ներկայացուցիչ ունենալու առաջարկը, պատուիրեց արեւելքի բոլոր հոգեւորականներին հանդիսով կատարել յուլիսի 14-ի ֆրանսիական աղգային տօնը և լին Բնականաբար պապի այսպիսի վերաբերումը չափազանց զրգոցեց Գերմ. կաթոլիկութեան զայրոյթը, որ և իւր ներկայացուցիչ միջոցաւ շատ խիստ աղղարարութիւններ արաւ վատիկանում և ոչ առանց հետեանքի, Պրոպագանդայի ղեկավար կարդինալ Լեգոսիոսիկու առաջնորդութեամբ, որ ջերմ պաշտպան է եռապետեան դաշնակցութեան և շատ զօրեղ ազդեցութիւն ունի մի մեծ կուսակցութիւն կաղմուեցաւ, բողոքող այն փառնոցների դէմ, որոնք Գերմանիայի և Աւստրիայի հետ յարաբերութիւնը սառցնելուց կարող էին յառաջ գալ, և կարդինալ Ռամպոլլան պապի ամենակարող ատենադպիրը, որ հակառակ կուսակցութեան պարագլուխն է և ֆրանսիական շահերի եռանդուն պաշտպանը՝ ինչպէս վերջին տեղեկութիւններից երևում է, ստիպուած է եղել տեղի տալ և գերմանական ներկայացուցչին իւր մօտ կանչելով այնպիսի զիջումներ և խոստումներ անել, որ Գերմանիայի հովանաւորութիւնը Պաղեստինում իւր հպատակ կաթոլիկների վերայ տարածելու բոլոր արգելքները վերացուած են համարում։ Այս հաշտութեան յայտարար նշանը պէտք է լինի գերմանական մի նոր ներկայացուցիչ նշանակելը վատիկանում, իսկ հետեանքն այն կլինի անշուշտ, որ ֆրանսիական ազդեցութիւնն արեւելքում խիստ զգալի հաւրում կկրէ ի նպաստ գերմանականին։

Սակայն այսքան բաւական չէ. Ախլէհէմ կայսեր ծանապարհորդութիւնը առանձին կարեւորութիւն է ստանում, եթէ բողոքական եկեղեցւոյ տեսակէտով նայենք խնդրին։ Սիոնի Պապականութեան ղեկավարութեան տեսութեամբ է այս առթիւ. «Մինչև այժմ այս կողմերում աւետարանական հաւատը անգլիական հաւատ, Լիթանանում ամերիկական հաւատ էր համարուում։ Այժմ յայտնի կլինի, որ ուրիշ մեծ ազդեր ևս այս հաւատն ունին, որ այս հաւատն ունեցողները հենց նոքա են, որոնք քաղաքակրթութեան և պետութիւնների գլուխ են կանգնած... և մօտ երկու հարիւր միլիոն հետեւողներ հաշուող բողոքական շարժումն այնպիսի աշխարհաստան հոգեւոր ոյժ է, որի հեղինակութիւնը կամայ տկամայ ծանաչել պէտք է։ Ինքը կայսրն առանձին հոգ է տարել այդ մասին, որ բողոքական եկեղեցին ըստ կարելւոյն աչքի ընկնող կերպով հանդէս գայ իւր ուխտագնացութեան միջոցին Պաղեստինում և ինքը ներկայանայ իրրե նորա գլուխ և պաշտպան։ Այդ նպատակաւ ծանա-

պարհորդութեան մասնակցելու հրաւիրուած են ոչ միայն Գերմանիայի, այլ և Զուիցերլանդի, Հոլլանդիայի, Էնգլիանի, Նորվեգիայի և Գանիայի բողոքական եկեղեցեաց ներկայացուցիչները, միայն Վիեննայի եկեղ. բարձր. խորհուրդը մերժել է իւր ներկայացուցիչներն ուղարկել, չնայելով որ աւստրիական կառավարութիւնը թոյլ էր տուել այդ սակայն Աւստրիայի և Վրէննուրգիայի բողոքական եկեղեցիները իրենց կողմից կուղարկեն։ Գիտն Գերմանիայի գանապան մասերից մօտ 130 հօգի բարձր կարգի հոգևորականներ մասնակցում են, որոնք կմեկնեն Համբուրգից առանձին նաւով կմիանան ուրիշ տեղերից եկածներին հետ Պաղեստինում միայն և բոլորը միասեղ կմասնակցեն և Փրիշի եկեղեցւոյ օրհնութեան հանդիսին։ Նաւային զանազան ընկերութիւններ մեծամեծ գիւրութիւններ են ստեղծել զէպի տրեւելք ճանապարհորդողների համար, այնպէս որ պէտք է երթագրել լծէ կայսեր Երուսաղէմում եղած միջոցին Եւրոպայի ուխտագնացների և ճանապարհորդների ահադին բազմութիւն ներկայ կգտնուի և նորա մուտքը և Երկիր շտեմուած շուքով և փառահեղութեամբ տեղի կունենայ։ Christliche Welt թերթը յառաջ է բերում այս առթիւ այն պատմական տեղեկութիւնները որոնք մտացել են Վիլհէլմ կայսեր նախնեաց՝ Հոհենցոլլերն իշխանների զանազան ժամանակներում զէպի Երուսաղէմ կատարած ուխտագնացութեանց մասին (ամենահինը եղել է 1320 թ.-ին, իսկ վերջինները մեր դարում՝ Վիլհէլմ Ա. կայսեր եղբոր՝ Ալբրեխտ իշխանի ճանապարհորդութիւնը 1842—1843 թ.-ին և Վիլհէլմ Ա.-ի թագաժառանգի ներկայ կայսեր հօր Ֆրիդրիխ Վիլհէլմինը 1869 թ.-ին)։— Եւ համեմատում է միջին դարերում այդ իշխանների յաճն առած ամէն զժառարութիւններն ու ստորացումները (նորա ստիպուած էին ծաղկաւ շրջել և թուրք աստիճանաւորների զանազան քմահաճոյքները կատարել) այժմեան փառքի հետ։— Սակայն այս ամէնից յետոյ լծէ այս թերթը և լծէ ուրիշ անաչառ գերմանական և օտար, մանաւանդ անգլիական, թերթեր շին կարող մտանալ, որ զօրեղ քրիստոնեայ կայսրը եկեղեցական շուքով իրեն սիրելի և ցանկալի բարեկամ, Տաճկաստան է մտնում այն օրերում, երբ ամէնքի մտքում շատ թարմ են գեռ և կարծես նորոգուել են սպառնում խիստ տխուր յիշողութիւններ։

Վերջին ամիսներում կրկին մի շարք մեծ ժողովներ և հանդէսներ ունեցաւ Գերմանիոյ բողոքական եկեղեցին, որոնց մէջ աչքի է ընկնում մանաւանդ Ներքին միսիոնի հաստատութեան տները նորա կենտրոն. յանձնախումբի յիմնական յորելեալը Այս հանդէսը կատարուեցաւ բողոքականութեան

որբան Վիստենբերգ փոքրիկ քաղաքում սեպտ. 20—21-ին, որին ներկայ էր մեծ բազմութիւն բարձր կարգի եկեղեցական և աշխարհական ներկայացուցիչների, նոցա լծուում և մի քանի նախարարներ և պետութեան առաջնակարգ պաշտօնեաներ, Հանդիսին կից ներքին միսիոնի հետ սերտ աւելնութիւն ունեցող Վադա եկեղ. համայնական խորհուրդն, ևս դուստարուել էր ուր ճառերի և վիճարանութիւնների հետադրութեան զխաւոր ատարկան էր այդպէս կոչուած առեւտարանացման շարժումը, մի նոր երեւոյթ, որ իւր վերայ է դարձնում բողոքական եկեղեցւոյ շուքը ու շարժութիւնը և եկ. թերթերի ու ժողովների քննադատութեան նիւթ է, յաճախ Այս շարժման նպատակն է առեւտարանական ոգի տրծարել ժողովրդի առաւել ստորգոյտակարգի մէջ և նման նպատակ ունեցող ընկերութիւններից նորանով է տարբերուում, որ ձգտումն է ցոյց տալիս եկեղեցւոյ անկիւն կազմակերպութիւն ստանալ և ամբողջի վերայ ազդելու համար նոյնպիսի միջոցներ գործ գնել, ինչպէս օր. Փրկութեան Բանակը, ժողովականների ընդհանուր կարծիքն այն կողմն էր ուղղուում, որ աշխատեն այդ առեւտարանիկներին կապել եկեղեցւոյ հետ և փողոցային ցոյցերը խափանել։— Եւնչ վերաբերում է բուն Ներքին միսիոնին՝ կրկին մի անգամ զգալի կերպով երևան եկաւ այստեղ, լծէ այդ մարդասիրական մեծ ձեռնարկութիւնը օրչափ գործ է կատարել և ընդարձակութիւն ստացել այս յիսուն տարուայ ընթացքում, բայց և որչափ պահանջ կայ յատկապէս սոյն այս մեր ժամանակ նորա հարկաւարաւիկ եռանդուն գործունէութեան։ Հանդիսաւոր ճառերից մեկում Էտեօկկեր աւստրիական կայսրուհու եղեռնական սպանումը մտանախիշ անելով՝ յիշեցնում էր լծէ նման մի զէպք էր տեղի ունեցել և նման պայմաններ էին ճնշում, երբ հանդէս եկաւ Վիստենն և Ներքին միսիոնի հիմք դրեց, այս և նման զէպքերը պարզ նշաններ են, լծէ բաղբերի ինչպիսի սոսկալի անկումն է տիրում հասարակութեան մէջ և ինչպիսի վնասակար տարրեր է սնուցանում նա իւր գրկում, որոնց գէմ առեւտարանը ձեռին միայն մարտաւել կարելի է, Հանդէսը հարկաւ իւր վայելուչ ընթացքն ունեցաւ և եռանդ ու ոգևորութիւն արծարծելու նոր առիթ եղաւ բազմաթիւ հիւրերի և հաղարար հանդիսականների մէջ, Անտրոնական յանձնախումբի նախագահ ուսուցչապետ Ալային այս առթիւ կայսրը նոր շքանշան է շնորհել։

— Պակաս հանդիսաւորութեամբ տեղի չունեցաւ Գուստաւ—Ադոլֆ ընկերութեան 51-րդ ընդհանուր ժողովը սեպտ. 13—15-ին Այւմ քաղաքում, Այն հանգամանքը, որ Այւմ քաղաքը բողոքականութեան պատմութեան հետ սերտ կերպով կապուած է և նորա մայրը առձառը իւր՝ Եւրոպայի ամենաբարձր, հրաշալի զանազակատուած ամենամեծ և ամենահայկապ բո-

գործական տաճարն է և գոթական ամենափառահեղ շէնքերից մէկը՝ որ Պիլիտեմբերգի ժողովուրդի մէջ առանձնապէս կենդանի է կրօնական եռանդը և այն երկրներից մէկն է սաւ ուրաւելի մրցումն կայ կաթոլիկութեան դէմ՝ մեծապէս նպաստում էր ժողովրդ բազմամարդ և բազմակողմանի դարձնելու գրեթէ սովորականից ոգևորութիւն յառաջ բերելու։ Մայր տաճարում կատարուած հանդէսներին տասն հազարից աւելի աղօթողներ էին մասնակցում։— Ընկերութեան առեւտրային տուած հաշուից երևում է, որ վերջին տարին մի շարք նոր մասնաճիւղեր են աւելացել, այնպէս որ նոցա ընդհանուր թիւը 1862-ից 1875-ի է բարձրացել, կանանց ընկերութիւնների թիւը բարձրացել է 549-ից 563-ի։ Ընդհանուր եկամուտ ունեցել է ընկերութիւնը մօտ մի միլիոն հարիւր յիսուն հազար բուրլի՝ յիսուն հազարով աւելի քան նախընթաց տարին։ ծախք աւելի քան վեց հարիւր յիսուն հազար բուրլ է 48 մեծ և 28 նորերիւր սկսուել։ զորա հետ մէկ տեղ կառուցուել են մի շարք ուրիշ եկեղեցական, դպրոցական և բարեգործական շէնքեր։— Այսպէս, բողոքականութեան պաշտպան Ըուէզիոյ Գուստաւ—Ադոլֆ թագաւորի անուան ներքոյ բոլոր այն երկրներում ուր բողոքականներ են ապրում և շփման մէջ են կաթոլիկների հետ՝ մի ընդարձակ բազմաճիւղ գործ է կազմակերպած, որ, ինչ քան և համեստ չափով պաշտպան է կանգնում բողոքականութեան շահերին և յաճախ յաջողութեամբ ներքին կոխ վարում կաթոլիկութեան դէմ։

«Աւետարանական միութիւնը» որ նման նպատակ ունի, իւր 11-րդ ընդհանուր ժողովն ունեցաւ հոկտ. 3—6-ին Մագդէբուրգ քաղաքում և կրկին առանձնապէս նպաստուոր պայմանների մէջ՝ յաջող ընթացքով։

— Մասնաւոր սեչագրութեան արժանի է նա և լուեւացիների հոգիւնների խորհուրդի գումարումը սեպտ. 13—14-ին, Պէտք է ինկատի ունենայ, որ վաղուց վեճ կայ բժիշկների և պատարների մէջ, թէ արգելք մարմնական բժշկութիւնը, թէ հոգեւոր միջնորդութիւնը գլխաւոր տեղ պէտք է բան խելացիների խնամատարութեան գործում։ Խորհուրդի վերջին գումարումը ապացուցեց, որ վեճը վերանալու վերայ է և երկու կողմից այն համոզման են գալիս հետզհետէ, թէ հոգեւոր և մարմնաւոր բժշկութիւնն հաւասարաչափ կարեւոր են այստեղ, և բժիշկ ու քահանայ ձեռք ձեռքի տուած պիտ գործեն։



ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅ.

ԿՈՄԻՏԵԱՍ ԿԱԹՈՒՂՈՒԿՈՍԻ

ՄԻ ՆՈՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ.

ԽԵՉՊԵՍ յայտնի է, Վեհափառ Հայրապետի հրամանով և յատուկ հսկողութեամբ նորոգուում է ս. Հռիփսիմէի տաճարը։ Արտաքին նորոգութիւնը պատրաստ է և սքանչելի տրպաւորութիւն է անում նայողի վերայ։ Այժմ սկսուած է ներքին վերանորոգութիւնը, որ մեզ համար միանգամայն անապասելի նորութիւններ ևս երեւան բերեց։ Մի քանի շաբաթ առաջ արդէն մի արձանագրութիւն էր բացուած, նորերս լսեցինք և երկրորդ արձանագրութեան բացման մասին։ Հ. Կարապետ վարդապետի հետ Հռիփսիմէ գնացինք այդ արձանագրութիւնները զրի առնելու։ Երբեք մեծ եղաւ մեր զարմանքը և ուրախութիւնը, երբ տեսանք, որ արձանագրութիւններից մէկը Կոմիտաս կաթողիկոսինն է, ս. Հռիփսիմէի ներկայ աաճարի շինողին։

Կոմիտասի արձանագրութիւնը քանդակուած է մի առանձին քարի վերայ, որ հագցրած է աւագ սեղանի ետեւ արեւելեան որմի մէջ՝ ներսի կողմից, 67 մետաղափ դուրս ընկած որմից, արեւելեան լուսամտի ճակատին։ Արձանագրութիւնն անեղծ է, շատ քիչ տեղեր միայն ծեփը քակելիս վարպետների անզգուշութեամբ փոքրինչ փաստուած են, երկարութիւնը 35 սանտ. իսկ լայնութիւնը 1 1/2 մետր։

ՎԻՍ ԵՎ յիշեա զկոմիտաս հայոց կաթողիկոս շին աւղ սրբոյ հռիփսիմէի

Կոմիտասի անունով մի ուրիշ արձանագրութիւն յայտնի էր առաջ։ Փիլիպպոս կաթողիկոսի օրով շինուած փոքրիկ զանգակատունը այցելուների աչքից ծածկում է այդ արձանագրութիւնը, ինչպէս և նորա ստորեւ ու արեւմտեան դրան վերեւ գտնուած լուսամտի կամարի ղեղեցիկ զարդերը, որոնք արժանի են առանձին ու շագրութեան։ Բազմափաստակ Եովհաննէս կալիսկոպոս Շահխաթու-